



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՍՏԵԱՆ ԹԵՄԻ

WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՀԱՄԱՅՆՔԻ ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ Զ. ԱՆՏՈՆ ՍԱՐՈՅԵԱՆ ՀՐԱԺԵՇՏԻ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԸ ՏՈՒՄ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱԶԱՆԻՆ

Լոս Անճելըսի եւ շրջակայից Հայ Կաթողիկէ Համայնքի ժողովրդապետ Հոգ. Տ. Անտոն Կրդ. Սարոյեան Ուրբաթ, 16 Յուլիսի կէսօրին այցելութիւն մը տուաւ Ազգային Առաջնորդարան եւ ընդունուեցաւ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի կողմէ: Յարգելի հոգեւորականը եկած էր հրաժեշտ տալու Առաջնորդ Սրբազանին, նկատի ունենալով որ շրջանիս մէջ իր պաշտօնավարութեան շրջանը վերջ գտած է ու կոչուելու է այլ աշխատանքի:

Առաջնորդ Սրբազանը ողջունեց Հայր Անտոնը. մտերմիկ գրոյցի ընթացքին, անոնք անդրադարձան հայութիւնը յուզող ու յատկապէս Արեւմտեան Միացեալ Նահանգներու մեր ժողովուրդը հետաքրքրող հարցերու շուրջ, որոնց շուրջ սերտ գործակցութիւն զարգացած է հայկական յարանուանութեանց միջեւ, եւ ուր Հայր Անտոն ունեցած է դրապաշտ դերակատարութիւն: Առաջնորդ Սրբազանը դրուատիքով խօսեցաւ Հայր Անտոնի ցուցաբերած գործակցութեան ոգիին ու առհասարակ անոր ժողովրդանուէր եւ եկեղեցանուէր վաստակին մասին, մաղթելով, որ յարգելի հոգեւորականը նոյն յաջողութեամբ շարունակէ իր յառաջիկայ աշխատանքները, ուր որ ալ տանի զինք իր առաքելութիւնը: Ան նաեւ վստահութիւն յայտնեց, որ հայկական յարանուանութեանց միջեւ սերտ յարաբերութիւններն եւ մեր ժողովուրդին շահերուն ու իրաւունքերուն ի խնդիր գործակցութիւնը շարունակուի յառաջիկային:

Հայր Անտոն շնորհակալութիւն յայտնեց այս բարեմաղթութեանց համար ու իր կարգին, բարի երթ մաղթեց Առաջնորդ Սրբազանին ու Ազգ. Առաջնորդարանի գործունեութեան: Մեկնումի պահուն, Առաջնորդ Սրբազանը յուշանուէր մը յանձնեց պաշտօնաւարտ հոգեւոր եղբոր:

PRELATE BIDS FAREWELL TO RECTOR OF THE ARMENIAN CATHOLIC CHURCH VERY REV. FR. ANDON SAROYAN

On Friday, July 16th, 2010, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, welcomed Very Rev. Fr. Andon Saroyan, Rector of the Armenian

Catholic Church, who had come to bid farewell to the Prelate as his tenure in the Los Angeles area comes to a close.

The Prelate and Fr. Andon discussed a number of issues concerning the Armenian people, specifically those in the Western United States, and the collaboration of the three Armenian denominations to alleviate these concerns. The Prelate expressed his appreciation to Fr. Andon for his collaboration and his service to his faithful throughout his term, wishing him success as he embarks on a new mission.

Fr. Andon thanked the Prelate for his well wishes, and expressed similar sentiments for the Prelacy and its endeavors. The meeting concluded with the presentation of a memento by the Prelate.